91.542-7
Ա-93

„ԱՇԽԱՏԱՆՔ“-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ԿՐԻՏԻԿՈ-ԾԻԾԱՂ

1. „Բարձրապատիվ“ յեզրափակվան խոսք
2. Ցուցատետր
3. Խառնուրդ:

ԳԻՆԸ 2 ԿՈՊԵԿ

31371

Изд. СПС Армении

КРИТИКО-СМЕХ

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 2 4բ
ՏԻՐԱԺ 500. Պ. 86

ՀՀ Ազգային գրադարան
NL0340165

891.99
Ք-57
19 NOV 2011

„ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ" ՅԵՁՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

— Ցես քննադատությունից չեմ վախենում և վորպես сознательный, должностное лицо, վողջունում եմ առողջ և խելացի քննադատությունը։

Բայց այստեղ նախորդ оратор-ներից մեկը թույլ տվեց ինձ քննադատել և իմ հասցեին հղել այնպիսի շպրտվածքներ, просто հակախորհրդային, провокацион և Զեմբերլենյան հատուկ նոտաներ, վորոնք առհասարակ և մասնավորապես սովոր են գործածել անգլիական հակախորհրդային պնդաճակատները՝ իմպերիալիստական միացյալ ֆրոնտներում։

Այո, այդ հիշյալ ճառախոսը համարձակվեց ինձ մեղադրել բյուրոկրատիզմի մեջ, բայց կարծեմ դուք ինձ լավ եք ճանաչում՝ և թույլ տվեց ասելու, վոր ես вообще имел грубоеотно шение, այսինքն չափազանց կոպիտ եմ վերաբերվում դեպի իմ ստորադրյալ подчиненни-քը, ապա, իբր թե, և վորպես թե, ես ունեմ այսպես ասած իմ особый սիրեցյալներս։ Այս ամենին դեռ կարելի է հանդուրժել, բայց ես չեմ թույլ տա, վոր մարդիկ մտնեն իմ գաղտնիքների և անձնական հաշիվների մեջ, ընդհանուր ժողովում հայտարարել, վոր ես առանց տեղկոմի գիտության, ինձ մոտ, վորպես անձնական քարտուղարի, տեղ եմ տվել որիորդ Սիրանուշ Բաղդասարովային և բացի այդ, իբր թ- բոլորովին հաշվի չեմ առնում մեր տեղկոմին։

Ցեթե, ասենք, այդ բոլորը ճիշտ էլ լինեն, ճառան

22.04.2013

խոսն իրավացի իր ասածների մեջ, բայց վայել է այդ արարքը Խորհրդային Հանրապետության գիտակից մի քաղաքացու, մի այդպիսի աղբակույտ բերել ընդհանուր ժողովի առաջ և հակաքննադատության յենթարկել ինձ և ինձ հետ էլ մեր իշխանությանը։

Ցավ յեթե ընկերն այդպես բաներ ուներ ասելու, պարտավոր եր գար առանձին իմ կաբինետս և առանձին ասեր իմ ականջին և վոչ թե այստեղ։

Ցես նորից կրկնում եմ, վոր չեմ վախենում քննադատությունից, թեկուզ նա լինի սուր, դաժան, մինչև իսկ մերկացուցիչ, բայց անթույլատրելի յե, վոր Հոկտեմբերյան Հեղափոխության 10-րդ տարում և մեր շինարարության գլխավորույտ վերելքում թույլ տալ նման ոպպոզիցիոն յելույթներ, վորոնք գնում են հոգուտ մենշևիզմի և Զեմբերլեններին. դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի ճեղքվածք Խորհրդային միասնական ճակատում։ Նման անխոհեմ բամբասանքների դեմ իմ պայքարը կլինի դաժան ու վոխերիմ։

Ընկերներ, կոչ եմ անում միասնական կուռ շարքերով ճակատ կազմել և բուռն պայքար մղել նման տիպերի դեմ, վորպիսիք են և վորպիսին է հիշյալ ճառախոսը։

ՑՈՒՑԱՄԱՏԸ

Քննադատությունը խիստ կարևոր է։

Դուք ճանաչում եք մեր տեղկոմի նախագահ Սուրեն Խորենուն։ Ինչպես չե. պետք է ծանոթանալ։ Մեր բաժնի վարիչը նրան բարևելիս սեղմում է ձեռքը, գլխ. գործավարը կանչում է անուն և հայրանունով, իսկ նախագահը չի սխալվում և ճանաչում է նրան անձամբ՝ դեմքից։

Ինչումն է գաղտնիքը. այն, վոր նա հայտնի կրիտիկոս է, այսինքն քննադատ է։

Չլինի Խորենին՝ մեր ժողովները վոչինչ են. բայց շատերն էլ ասում են, վոր չլինեն մեր ժողովներն ու կոլլեկտիվն իր բացերով՝ Խորենին ինքը չեր հայտնաբերվի վորպես հռետոր։

Նա գիտե ում քննադատել և ինչպես։ Քննադատել ադմինիստրացիային, այդ ինչ մեր գործն է. բայց փոկերին, տնտեսական բաժիններին, բանկոպներին և առհասարակ մեզնից ընտրված որգաններին՝ վորքան կուզես։

Ժողովների ժամանակ յեթե նա չի էլ յեկել, այնուամենայնիվ յեկած մոմենտին, վորևե անկյունից պիտի անխուսափելիորեն բարձրանա նրա ցուցամատը և թեկուզ առանց սպասելու նախագահի ձայնտվությանը, կանգնում է և սկսում։

Սկսում է կամաց, բայց հետո ինչպես տենոր, մի անգամից բարձրանում մինչև վերին ձայնանիշը։

Ցերբ նա ուզում է աղղել, հարվածել, ասենք թե՝

«Համաձայնողական» սիստեմը, դեմքին տալիս է մը-ռայլ կերպարանք, իսկ հեգնանքը գործ է ածում վորպես հարվածող սուսեր։ Բարձրանում է վոտի քթերի վրա, ապա առանձին ժեստով բարձրացնում ցուցամատը, ասելով.

— Այդ «համաձայնողություն է»։

Անշուշտ ամեն մեկը հասկանում է թե ինչ նշանակություն ունի ցուցամատի ամեն մի շարժումը։

Դուք տեսած կլինեք յերաժշտական խումբ ղեկավարող դերիժյորի ցուցափայտը։ Ով չի յենթարկվում այդ ցուցափայտին, կամ չի լսում նրան, անպայման դուրս է վռնդվում որկեստրից։

Խորհնին ժողովների դերիժյոր է՝ իր ցուցամատով։

Մեզնում շատ քննադատներ կան, բայց առանց դերիժյորական ցուցափայտի, իսկ այդ ցուցափայտը Սուրեն Խորենու ցուցամատն է. ով չլսեց նրան և չենթարկվեց, անպայման դուրս կվռնդվի մեր կոլեկտիվից։

Շատերը կուզեին, վոր դերիժյորական այդ ցուցափայտը չլիներ մեր ժողովներում, բայց դժբաղդաբար նա միշտ լինում է առանց բացակայելու։

❀ ❀

ԽԱՌՆՈՒՐԴ

ՄՏՔԵՐ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

— Սխալներին — ժամանակ՝ առանց սահմանափակման, իսկ սխալները քննադատելու ընդհ. ժողովներում՝ բեգլամենտ 10 բոպե։

— Աշխատում են վոչ թե նրա համար, վոր քննադատեն, այլ քննադատում են վորպեսզի աշխատեն։

— Դուրեկան է միշտ լսել ուրիշին քննադատելը։

— Ուրիշներին կրիտիկայի յենթարկողը հաճախ ինքն է ընկնում կրիտիկական դրության մեջ։

ԱՆՏԵՂԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

— Մարկոսը յերեկ Չինաստանի մասին զեկուցեց.

— Հը, ինչպիսի զեկուցում եր։

— Զեկուցումը Չինաստանի պես մեծ եր ու անհասկանալի։

ՆՈՐ ԱԳԻՏ ԿԱՄՊԱՆԻԱ

ԴԱՏԱՎՈՐ.— Ցավ այդպես, քաղաքացի հանցագործ, դուք ծեծել եք ձեր խնամուն։ Պատճառն ինչ եր...

ՀԱՆՑԱԳՈՐԾ.— Ինչպես ինչ պատճառ, լրագիր չե՞ք կարդում ինչ է, չգիտե՞ք, վոր պիտի կռվել խնամիությանդեմ։

31371

ԳՆԵՐԻ ԻՋԵՑՄԱՆ ՀԱՄԸ

— Բանկոսպից գնած կոֆեյում ինչ վոր համ կա...
— Հավանաբար գնելի իջեցման համն է։

ՅԵՎՐՈՊԱՅԻ ՎԵՐԱՇԻՆՈՒՄԸ

— Մեզ, գերմանացիներիս անիծում են, վոր իբր թե՝ մենք Յեվրոպայի շատ վայրերն ավերակ դարձրինք։

Սուտ է, ընդհակառակը մենք վերաշինում ենք Յեվրոպան։

— Ի՞նչպես, մի՞թե։

— Ի հարկե, չե՞ք տեսնում, հազարավոր նոր կապարմանելը ենք շինում...

ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄ ԶՐԵՐՈՒՄ

Գավկոնֆերանսի ժամանակ, յերբ պիտի զեկուցեր վերստուգիչ հանձնաժողովը, տեսան, վոր զեկուցողը չկար. փնտրեցին, փնտրեցին և վերջը գտան նրան ձուկ վորսալիս...

891·99
Թ-71